# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ԴԱՀԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

15.12.2025թ Թլիկ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. դեկտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի Թլիկ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԴԱՀԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Արևուտի համայնքապետարանի ներկայացուցիչ Միեր Մարտիրոսյանը, Թլիկ բնակավայրի վարչական ղեկավար Սլավիկ Սալոյանը, նախագծող՝ «Թրիգեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը, «ԴԱՀԱ» ՍՊԸ ընկերության տնօրեն՝ Գրիգոր Չիչոյանը, համայնքի բնակիչներ:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 80 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, փակցվել է մարզպետարանի, Արևուտի համայնքապետարանի շենքում փորձաքննական կենտրոնի և համայնքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:

Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, մշտադիտարկումներին, ռեկուլտիվացիով աշխատանքներին:

Գոհար Մինասյանը խնդրեց պարզաբանել, որդյոք հաշվետվությունում առանձին է ներկայացված բնապահպան միջոցառումների համար նախատեսված գումարը մշտադիտարկումների գումարից: Ինչին ի պատասխան Ռուբեն Վարդանյանը նշեց, որ այո հաշվետվության «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ» գլխում բերված աղյուսակում ներկայացված է բնապահպան միջոցառումները, ինչպես նաև դրանց իրականացման համար պահանջվող ծախսերը: Իսկ հաշվետվության «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ» գլխում ներկայացված է մշտադիտարկումների համար նախատեսված գումարը:

Գոհար Մինասյանը հարցրեց, արդյոք խախտված հողերի վերականգնման համար նախատեսված գումարը բավարար է փաթեթով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար և կենսաբանական ռեկուլտիվացիայի պարզաբանման վերաբերյալ: Ինչին ի պատասխան Ռուբեն Վարդանյանը մանրամասն ներկայացրեց, որ ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքի հաշվարկը կատարվել է «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2021թ N 1352-Ն որոշման համաձայն, որտեղ առանձին-առանձին հաշվարկվել է թե տեխնիկական և թե կենսաբանական փուլերի աշխատավարձները, նյութերը, այլ ծախսերը և այլն, և հավելեց, որ հաշվի առնելով ՀՀ-ում գործող գները և նմանատիպ հանքավայրերի փորձը հաշվարկված գումարը լիովին բավարար է ռեկուլտիվացիոն աշխատանքները պատշաճ իրականացնելու համար:

Հարց հնչեց հայցվող տարածքի հողային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ: Ինչին ի պատասխան Ռուբեն Վարդանյանը նշեց, որ ՇՄԱԳ փորձաքննական կենտրոն ներկայացված ամփոփաթերթում մանրամասն պարզաբանվել է տվյալ հարցը:

Հնչեց հարց համայնքի ներկայացուցիչ Միեր Մարտիրոսյանի կողմից կապված համայնքին հատկացված ծախսերի վերաբերյալ, ինչին Ռուբեն Վարդանյանը պարզաբանեց, որ նախագծով ներկայացված է սոցիալական միջոցառումներ և համայնքին հատկացվող գումարի չափը ընտրելիս հաշվի է առնվել նմանատիպ հանքավայրերի փորձը:

Գոհար Մինասյանը ներկայացրեց նաև հաշվետվության վերաբերյալ դիտողությունները, կապված թափոնների, մթնոլորտային օդի, ջրօգտագործման վերաբերյալ, Ռուբեն Վարդանյանը անդրադարձավ և պարզաբանումներ ներկայացրեց:

Այնուհետև Գոհար Մինասյանը հարցրեց, թե արդյոք այլ հարցեր չունեն, ինչին մասնակիցները կողմ արտահայտվեցին: Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն «ԴԱՀԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի Թլիկի կոպճային ավազի հանքավայրում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«ԴԱՀԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գրիգոր Չիչյան